# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

17 հունիսի 2026թ. թիվ 642

## Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, Ա.ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ ԵՎ Ս.ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՏԱՇԻՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանի 2026 թվականի հունիսի 16-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանին, գլխավոր մասնագետներ Արտյոմ Շահվերդյանին և Սամվել Խառատյանին ս/թ հունիսի 18-ին մեկ օրով գործուղել Տաշիր՝ «Բուսաբուծության աջակցության» ծրագրով նախատեսված մոնիթորինգ իրականացնելու համար:
2. Գործուղումն իրականացնել «ВАЗ 21154, 2012թ.» մակնիշի 610 CP 61 պետհամարանիշի ավտոմեքենայով:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:
4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանին, գլխավոր մասնագետներ Արտյոմ Շահվերդյանին և Սամվել Խառատյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Invalid signature

X

ԱԻԴԱ ՇԻՐԻՆՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: SHIRINYAN AIDA 5301740180 Ա.ՇԻՐԻՆՅԱՆ

2026թ. հունիսի 17
ք.Վանաձոր